Նշանը թռչելով ցած է իջնում Վարագայ լեռնագագաթի բարձրութիւնից, եւ նրանից ցոլանում են տասներկու լուսեղէն սիւներ, որոնք հանգչում են տասներկու տեղերի վրայ: Հրեղէն սիւները այնքան ժամանակ մնում են այնպէս կանգնած, մինչեւ երկրի իշխանները եւ ժողովուրդը տեսնում են նրանց: Յետոյ բարեպաշտ ժողովուրդը, միացած իր իշխանների հետ, կառուցանում են տասներկու տաճարներ միեւնոյն տեղերի վրայ, ուր իջել էին լուսեղէն սիւները: Նրանցից երկուսը իջել էին այն տեղում, ուր շինուեցան Ս. Գրիգոր եւ Կարմրաւոր վանքերը: Երեքը իջել էին Վերին Վարագում, որ եւ կոչւում է Գալիլիա: Իսկ եօթը՝ Ներքին Վարագում: Այդ եօթն տաճարներից բաղկացած եկեղեցիների խումբը, որոնց իւրաքանչիւրը առանձին-առանձին անուններ ունի, բոլորը միասին սարի անունով կոչւում են Վարագայ վանք:

Այն օրից, որ յայտնուեցաւ ս. Նշանը, հայոց եկեղեցին նրա համար տօն սահմանեց, որ կատարւում է մինչեւ մեր օրերը: Այն օրից, որ յայտնուեցաւ ս. Նշանը, Վարագը դարձաւ հայոց լեռների սուրբ Սիոնը: Նրա գագաթը, նրա կուրծքը, նրա ստորոտները ծածկուեցան վանքերով, եւ կրօնաւորների բազմութիւնը լցրեց այդ վանքերը: Երկար տարիներ յիշեալ սուրբ Նշանը պահւում էր Վարագայ վանքում, եւ ամէն կողմից ուխտաւորների բազմութիւնը դիմում էր այնտեղ երկրպագութեան համար: Երկրի թէ՛ հարուստը, թէ՛ աղքատը թափում էր այնտեղ իր արծաթն ու ոսկին, նուիրում էր իր կեանքն ու կալուածքները ս. Նշանի սպասաւորներին, որպէսզի Վասպուրականի այդ հռչակաւոր սրբավայրը միշտ շէն ու պայծառ մնայ: Աբեղաները այնտեղ վայելում էին ժողովրդի բարեպաշտութեան պտուղները եւ աղօթում էին աշխարհի համար:

Գագիկ Արծրունին ծախսեց իր գանձերից ահագին գումար եւ շինել տուեց յիշեալ ս. Նշանի համար մի ոսկեայ տուփ եւ պահարան: Իսկ Աշոտ արքայորդին ծախսեց երեսուն հազար ոսկի եւ զարդարեց նրա պահարանը մարգարիտներով եւ թանկագին քարերով: Երբ Արծրունիների վերջին թագաւոր Սենեքերիմը, իր ամբողջ պետութիւնը տալով յունաց կայսրին, ինքը տեղափոխուեցաւ Սեբաստիա, նա իր թագաւորութիւնից յօժարուեցաւ զրկուել, բայց ս. Նշանը տարաւ իր հետ: Իսկ յետոյ դժբախտ թագաւորի մարմնի հետ կրկին փոխադրուեցաւ Վարագ: Այնուհետեւ այդ թանկագին սրբութիւնը դարձաւ զանազան բռնակալների ագահութեան առարկայ: 1651 թուին Խոշաբ բերդին տիրող քուրդ Սուլեյման բեկը՝ Չոմար կոչուած աւազակապետի առաջնորդութեամբ եկաւ, կողոպտեց Վարագայ վանքի հարստութիւնները եւ ս. Նշանը գերի տարաւ իր բերդը: Բարեպաշտ ժողովրդի առատաձեռնութեան դարեւոր արդիւնքները մի քանի օրուայ մէջ ոչնչացան: Չորս